

Թադևոս Տեր-Մեսրոպյան. Գրաֆիկան՝ իր ողջ բազմազանությամբ



Նկարիչների պակաս, իրոք, չկա Հայաստանում: Այդուհանդերձ քիչ են գրաֆիկայի բնագավառում ստեղծագործողները: Շատերը նախընտրությունը տալիս են յուզանկարչությանը, կտավի վրա հաստ ու թանձր շերտեր քսելուն, քան թե ջրանկարչության թեթև ու փափուկ վրձնահարվածներին կամ գրաֆիկայի մյուս միջոցներին:

Թերևս մեր հոգեկերտվածքով է պայմանավորված նման նախասիրությունը: Հայոց դժվար պատմությունն ու նրա վայրիվերումները, մեր անցած տառապալից ուղին և կրած ապրումները ենթադրել, ավելին՝ պարտադրել են նկարչության այդ եղանակը, պայմանավորել կուտակ-կուտակ գույների օգտագործումն ու կտավի հետ կռիվ տալու կերպը: Մինչդեռ ավելի խաղաղ ու հանգստավետ կյանքով ապրած եվրոպացիները, հատկապես Հյուսիսային Եվրոպայի ժողովուրդները, գեղարվեստական ինքնարտահայտման ջրանկարային ձևն են ընտրել՝ նախապատվությունը տալով դրա թափանցիկ ու մեղմ երփնագրին:

Այս խոհերն առաջացան իմ մեջ՝ այցելելով Հայաստանի ճարտարապետների տանը բացված Թադևոս Տեր-Մեսրոպյանի «Բարեկամության կամուրջ» ցուցահանդեսը: Վաղուց չէի տեսել մաքուր հոգու և պայծառ հայացքի տեր արվեստագետ-բարեկամիս, որը ժամանակին (1985-1994թթ.) ղեկավարում էր Հայաստանի Նկարիչների միության ստեղծագործական բաժանմունքը: Պարզվում է՝ շատ-շատերի նման նա ևս տարիներ առաջ բախտ որոնելու էր մեկնել Ռուսաստանի Ղաշնություն՝ Մոսկվա, բայց և քչերի նման տասը տարի անց կրկին վերադարձել հայրենի տուն: Հանդգվել է, որ դրսում արվեստագետ հոգիներին հեշտ կյանք չի սպասում. հարկ է եղել պայքարել թե՛ դրսի մարտահրավերների, թե՛ ներսում գլուխ բարձրացրած ստեղծագործական «ես»ի դեմ: Ու վերջինս նրան ետ է բերել հայրենիք՝ շարունակելու կյանքի հետագա ուղին յուրայինների մեջ և կյանքն իմաստավորելու նորահաս սերնդին իր գեղարվեստական հարուստ փորձը փոխանցելով:

Ճիշտ է, ծնվել է Երևանում (1945թ.), սակայն մանկության հուշերը հիմնականում կապված են գեղարվեստական ավանդույթներով հարուստ Գյումրու հետ. երաժիշտ մայրը ծնունդով գյումրեցի է եղել: Անձկությամբ է սպասել ամառային արձակուրդներին, որպեսզի մեկնի հարազատ դարձած պապական տուն: Կարսեցի հայրը Լենինականի որբանոցում է մեծացել՝ այդտեղ մտերմանալով Հովհաննես Շիրազի, Խաչատուր Եսայանի, շատ այլոց հետ: Մեր զրույցից են իմանում, որ նկարչի հորական պապը՝ Տեր Մեսրոպը, եղել է Կարսի Սբ. Նշան եկեղեցու ավագ քահանան և անցյալ դարասկզբին ռուսական ցարի հայահալած քաղաքականությամբ

դեմ դուրս գալու պատճառով աքսորվել է Բեսարաբիայի Գրիգորիոսյան քաղաք: Այդտեղ նա ծավալել է հոգևոր գործունեություն տեղի հայկական եկեղեցում: Պարզվում է նաև, որ Գյումրու Մերկուրովի անվան նկարչական դպրոցի հիմնադիրներից Աշոտ Սաֆարյանը եղել է Թադևոսի մորեղբայրը:

Լինելով նման գերդաստանի ժառանգ՝ Թադևոս Տեր-Մեսրոպյանը մինչ հիմա վառ է պահում մանկության հուշերն իրեն հանդիպած արվեստագետներից: Առաջին նկարիչը, որին նա տեսել է ստեղծագործելիս, հանրահայտ Հրաչյա Ռուխկյանն է եղել, ով սիրում էր երեկոներն այցելել Գյումրու «Գորկա» կոչվող բարձրադիր այգի՝ Արագած սարը նկարելու համար: Այդ տպավորությունները կամաց-կամաց կերտել են ուշիմ պատանու հոգին ու նրան մղել դեպի գեղարվեստի աշխարհ:

Այդ մղումը 1967-ին Թադևոսին տարավ Ռիգա, որտեղ երկու տարի սովորեց տեղի Գեղարվեստի ակադեմիայի նախապատրաստական բաժանմունքում: Հիմնավոր գիտելիքներ ստանալուց և գծանկարի գաղտնիքներին ի մոտ ծանոթանալուց հետո նա վերադառնում է Երևան և ընդունվում Երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտի դիզայնի բաժին: Հավանաբար մերժբալթյան այդ քաղաքն իր ուրույն գեղարվեստական մթնոլորտով կանխորոշեց ապագա նկարչի ստեղծագործական ուղին՝ նրան ուղղորդելով դեպի գրաֆիկայի անձանոթ ոլորտ: Թե՛ սովորելու տարիներին, թե՛ ավարտելուց հետո Թադևոսն անհագորեն ձգտում էր տիրապետել գրաֆիկայի տեխնիկայի տարբեր միջոցներին, համբերատար ուսումնասիրում էր դրա բազմազան տարատեսակներն ու դրսևորման ձևերը: Արձագանքելով հռչվածի սկզբում արտահայտած խոհերիս՝ նա ավելացրեց. «Այո, մեր միջավայրը, բնությունն անգամ թելադրում են ոչ ջրանկարային մտածողություն»:

Նկարիչն իր ստեղծագործական կենսագրության մեջ շատ է կարևորում իր երեք գործուղումները մերձմոսկովյան Սենեժում գտնվող համամիութենական Ստեղծագործական տուն, որտեղ բոլոր պայմանները կային գրաֆիկական արվեստի բոլոր ճյուղերին հարաբերվելու և դրանցում հմտանալու համար: Ամեն անգամ վերադառնում էր նոր աշխատանքներով և գրաֆիկական մի նոր լեզու սերտած: Այսօր, բացի կսիլոգրաֆիայից (փայտափորագրության մի տեսակ), նա ստեղծագործում է գրաֆիկային հատուկ մնացյալ բոլոր միջոցներով. օֆորտն իր տարբեր տեսակներով՝ գծային օֆորտ, փափուկ լաք, ակվատինտա և ռեզերվաժ, լիտոգրաֆիա, լինոփորագրություն, մոնոտիպիա, սերիգրաֆիա և այլն: Վկայությունը ցուցահանդեսին ներկայացված մի քանի տասնյակ գործերն էին, որոնք հատկորոշվում են գրաֆիկան բազմազանությամբ ու հմայքով ի ցույց դնելու կարողությամբ: Օֆորտի տեխնիկայով արված նրա «Հայաստան» պատկերը, որ արժանացել է միջազգային մրցանակի, մեր երկրի խորհրդանիշները մեկտեղելու հաջող փորձ է:





Նկարիչն այսօրվա պես հիշում է 1988թ. դեկտեմբերի 7-ը, երբ Հունգարիայի մայրաքաղաքում բացելիս է եղել հայ նկարիչների խմբային ցուցահանդեսը: Բացումից ընդամենը մի քանի ժամ առաջ է իմացել ավերիչ երկրաշարժի մասին և շտապել Գյումրի՝ օգնելու հայրենակիցներին: Իր տեսած սահմուկեցուցիչ պատկերների կարմիր (չասելու համար՝

արյունոտ) երանգավորումն է կրում սերիգրաֆիայի (սա լուսանկարչության և գրաֆիկայի համակցություն է) տեխնիկայով արված «Երկրաշարժ» եռանկարը: Հետագայում նա բազմաթիվ բարեգործական ցուցահանդեսներ կազմակերպեց՝ դրանց հասույթը փոխանցելով երկրաշարժից տուժածների հիմնադրամին: Մինչ այդ նա արդեն ջրաներկով ու խառը տեխնիկայով վրձնել էր սիրելի Գյումրիի անմոռանալի փողոցներն ու թաղամասերը:

Մոսկովյան շրջանը ևս իր հետքն է թողել Թադևոս Տեր-Մեսրոպյանի երանգապնակում: Նա բազմաթիվ ռուսական բնանկարներ է նկարել, կերտել Պետրոս Մեծի և Վալերի Բրյուսովի դիմանկարները: Հետաքրքիրն այն է, որ յուզաներկով արված կտավներում նկարչի վրձինը դարձյալ ջրանկարային փափկություն ունի, որի շնորհիվ նշյալ բնանկարները ձեռք են բերել ակնհայտ քնարականություն և բանաստեղծական ընդգծված ոգի: Մոսկվայում բնակվելիս մեր հայրենակիցը անհատական երեք ցուցահանդես է բացել՝ աշխատելով «Մոսֆիլմ»-ում որպես նկարիչ-դեկորատոր և միաժամանակ դասավանդելով Արվեստների մասնագիտացված պետական ինստիտուտում:

Ցուցահանդեսի այցելուներին առանձնապես գրավեց հայ ժողովրդի մեծ բարեկամ Ֆրիտյոֆ Նանսենի անկյունը, որտեղ 5-6 աշխատանքներ էին ցուցադրված: Այդտեղ թե՛ մեծ նորվեգացու դիմանկարն էր, թե՛ թղթի վրա տուշով արված «Ֆրամ» նավը սառույցների մեջ» պատկերը: Վերջինիս պարագայում Թադևոս Տեր-Մեսրոպյանը մեզ է հրամցնում յուրօրինակ տեխնիկայով արված բարձրարվեստ մի գրաֆիկական թերթ: Պարզվում է ճերմակ թղթի տարբեր հատվածներում շաղ տրված տուշի հոծ շերտը բարակ նշտարով քերելու արդյունքում է հեղինակը հասել մեծ արտահայտչականության՝ պատկերելով հյուսիսափայլն ու սառույցի ճիրաններում հայտնված նանսենյան նավը:

Նույն ոճով է արված նաև «Վիուկների խնջույքը» գծանկարը, որը նորվեգական սագաներից մեկի գեղեցիկ նկարազարդում է ներկայացնում: Լինոփորագրության տեխնիկայի արդյունք են «Արագած» և «Ազատի ջրամբար» աշխատանքները, իսկ Պետերբուրգյան քաղաքային տեսարանները պատկերող գծանկարները վկայում են նկարչի



նուրբ դիտողականության մասին:

Տեխնիկական այս բոլոր հնարները մատաղ սերնդին փոխանցելու մտահոգությունը Թադևոս Տեր-Մեսրոպյանին տարավ դեպի մանկավարժության ասպարեզ. այժմ նա դասավանդում է երևանյան մի շարք բուհերում: Ափսոսում է միայն, որ չկան անհրաժեշտ պայմաններ (լաբորատորիաներ, համապատասխան հաստոցներ, անհրաժեշտ նյութեր և այլն) պատանիներին տեսական գիտելիքներից զատ նաև գործնական հմտություններ սովորեցնելու համար:

Լևոն Լաճիկյան